

Ազնուաշուք
Տիկին Հրանոյշ Յակոբեան
Հայաստանի Հանրապետության Սփիւռփի Նախարար
Երեւան

Ազնիւ Տիկին Հ. Յակոբեան

Ձեր գլխաւորած Սփիւռփի նախարարութեան երկրորդ տարեդարձին բարեբաստիկ առիթով՝ սոյն գրով ջերմօրէն կ'ողջունենք Ձերդ նախարարութեան երկամեայ բազմաբեղուն գործունէութիւնը, որուն մանրամասնութեան ծանօթացանք համացանցային Ձեր լիակատար տեղեկատուութեան ընդմէջէն:

Մեր ուրախութիւնը կրկնապատկուեցաւ երբ նկատեցինք թէ վերջին երկու տարիներու ընթացքին Սփիւռփի նախարարութիւնը լաւագոյնս արդարացուց իր վրայ դրուած ակնկալութիւնները եւ հանդիսացաւ հայրենի պետականութեան ամենագօրեղ կառոյցներէն մէկը, որուն գլխաւորագոյն դերակատարումը վստահուած է Ձեզի, իբրեւ իմաստուն, կորովի ու բազմաշնորհ հեղինակութիւն:

Ստորագրեալս՝ 1959-էն ի վեր վայելած է հայրենի գիրի ու մշակոյթի կեդրոններու ղեկավարութեանց բարեկամութիւնը եւ այժմ, մեծ ուրախութեամբ կ'ողջունեմ Ձեզ, իբրեւ Առաջին նախարարը Հայրենիք-Սփիւռփ յարաբերութեանց, մաղթելով Ձեզի՝ քաջառողջ եւ արդիւնաւէտ երկար տարիներ:

Անկեղծօրէն Ձերդ՝
ԱՐԱՄ ՍԵՓԵԹՅԱՆ
Անդամ Հ.Գ.Մ. (1996)
Հ.Հ. Լրագրողներու Միութեան
Տէր եւ Տնօրէն ՍԻՓԱՆ Հրատարակչատան